լիստանի դաշնագրությամբ պարսկական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին, որն իրապես տեղի էր ունեցել 1805 թ., իսկ խանության հարավային հատվածը, Զավնդուր-Ողջի (Օխչի) գետի աջ ափից մինչև Արաքսի ափերը, մնաց Պարսկաստանին: Մեղրու գավառակն անջատվեց Ղարաբաղի խանությունից և հանձնվեց Սևքարի (Ղարադաղի) տեր Աբուլ-ֆեթ խանի իրավասությանը: Մնացած գավառակները շարունակեցին մնալ մահալների բաժանված և կառավարվում էին ըստ ավանդական սովորության Շուշում նստող խանին ենթակա կառավարիչներով, որոնց մեծ մասը կրում էր մելիք տիտղոսը: Զանգեզուրի գավառակը մտնում էր Տաթևի մահալի մեջ, որը կառավարում էր Օրբելյանների մելիքական տունը: Մահալական բաշխումը պահպանվեց մինչև Մեհտի-Ղուլի խանի փախուստը Պարսկաստան, թեև խանության այդ մասում նստած էր սահմանի հանգստությանը հսկելու համար ռուսական ոչ փոքր կայազոր, որի հրամանատարները միջամտում էին մելիքների գործունեությանը: Այդ բաշխումը պահպանվեց և Մեհտի-Ղուլի խանի 1822 թ. փախուստից հետո, երբ խանությունը վերանվանվեց «Ղարաբաղի պրովինցիա»— «Карабахская провинция» և խանի իշխանությունը փոխարինվեց Անդրկովկասի վարչապետի[2] կողմից նշանակված կոմենդանտի իշխանությամբ: Կոմենդանտը նույնիսկ աշխատում էր ուժեղացնել մահալներում մելիքների հեղինակությունը, ենթարկելով նրանց վարչական և դատական իրավասությանը մահալի խոշոր կալվածատերերին, որոնք մինչ այդ բավականին անկախություն էին վայելում[3]: Այդ շրջանայնացումը չխախտվեց նաև 1828 թ. Թուրքմենչայի դաշնագրությունից հետո, երբ Մեղրու գավառակն էլ անցավ Երևանի և Նախիջևանի խանությունների հետ Ռուսաստանին և ճանաչվեց նրանց հետ միասին Հայկական մարզի մի մասը (часть Армянской области) ենթակա Օրդուբադում նստող կառավարչին: Դրությունը հիմնովին փոխվեց 1840 թ. ապրիլի 10-ին կայսեր կողմից հաստատված՝ սենատոր Հանի մշակած օրենքի հրատարակումից հետո, որով Անդրկովկասում մտցվեց նոր քաղաքացիական վարչություն և նոր վարչական բաժանում: Ղարաբաղի պրովինցիան մտավ Կասպիական նահանգի մեջ որպես նրա «Շուշու գավառը», իսկ Զանգեզուրի բոլոր մահալները՝ որպես այդ գավառի մեկ գավառամաս (участок): Գավառապետը (уездный начальник) նստում էր Շուշում, գավառամասի տեղապետը (участковый заседатель)՝ Բուն Զանգեզուրի Գորիս գյուղում:

Երբ 1849 թ. առանձնացվեց Երևանի նահանգը, Գորիսի գավառամասի գլխավոր մահալները կցվեցին նրան: 1868 թ. կազմակերպվեց Գանձակի նահանգը (Елисаветпольская губерния): Նրա մեջ մտան առանձնացրած և՛ Շուշու գավառը (Шушинский уезд), և՛ Զանգեզուրի գավառը (Зангезурский уезд): Վերջինս միացնում էր թե՛ Բուն Զանգեզուրը և թե՛ Սիսիանն ու Կապանն իրենց տեղապետներով՝ զասեդատելներով: Քանի որ նորակազմ գավառի պետը նստում էր Գորիսում, Բուն Զանգեզուրի կենտրոնում, Զանգեզուր անունը տարածվեց բոլոր գավառամասերի վրա: Այսպիսով Զանգեզուր անունը ստացավ ընդլայնված նշանակություն:

1840 թ. օրենքով մելիքների վարչական և դատական իրավունքները վե-

---

[2] Ա. Պ. Երմոլովի:

[3] *Иваненко В. Н.*, Гражданское управление Закавказья, Тифлис, 1901, էջ 150 և 303: